

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ԵՎ ՈՐԲԵՐԻ ՈՒԾԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Կ. ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹԻ ԷԶԵՐՈՒՄ (1918–1922 թթ.)

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսում Անտանտի և թուրքական իշխանությունների միջև կնքված զինադադարի պայմանագիրը հնարավոր դարձրեց թուրքերի գերեզարած և նրանց կողմից բռնի կերպով տեղահանված հայերի վերադարձը Կ. Պոլիս և իրենց նախկին բնակավայրերը¹: Այդ փաստաթուղթն Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Թուրքիայում բնակվող ազգություններին տալիս էր խոսքի և հասարակական գործունեության ազատություն: 1918–1919 թթ. նմանվում էին 1908 թ. հուլիսին Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջմանը հաջորդած ժամանակահատվածին: «Գինովութեան նոր շրջան բացուեք էր: Ճիշտ ինչպէս որ եղեր էր 1908 յուլիսին: Հիմա ալ ազատութիւնը եկեր էր, բայց ի՛նչ սպանդէ մը յետոյ»², – իր հուշերում վկայում էր արևմտահայ հայտնի գրող և հրապարակախոս, Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթի (1909–1915 թթ.) պատասխանատու խմբագիրներից մեկը՝ Հակոբ Միրունին (Ճոլոյան): Օգտվելով երկրում ստեղծված հանգամանքներից՝ գաղափարակից ընկերների հետ վերջինս որոշում է հրատարակել «Ճակատամարտ» օրաթերթը՝ որպէս «Ազատամարտի» իրավահաջորդ³: Այս մասին Հ. Միրունին գրում է. «Առաջին հերթին մեր մտահոգութիւնն եղաւ «Ազատամարտը» վերսկսիլը: «Ճակատամարտ» կոչեցինք զայն՝ ի նմանութիւն «Ազատամարտին»: Առաջին թիւը լոյս տեսաւ 1918 նոյեմբեր 20-ին: Քիչ յետոյ Շաւարշ Միսաքեանն ալ ելաւ բանտէն, ու միասին վարեցինք այլևս թերթը»⁴:

«Ճակատամարտը» 1918–1922 թթ. գրեթե բոլոր համարներում անդրադարձել է հայ գաղթականների ունեզրկման և որբերի ու ծագման խնդիրներին:

Օրաթերթը փաստում էր, որ թուրքական իշխանությունների հարուցած արգելքների հետևանքով գաղթականի կարգավիճակում հայտնված արևմտահայությունը կամ մահացու հիվանդանում էր, կամ սովամահ էր լինում տունդարձի ճանապարհին, կամ ծննդավայր հասնելով՝ չէր կարողանում տիրանալ իրենից խլված ունեցվածքին, գույքին

¹ Թուրքիայի Հանրապետության պատմություն, հ. 4, գ. 1, Երևան, 2010, էջ 14:

² Յ. Միրունի. Բնքնակենսագրական նոթեր, Երևան, 2006, էջ 204:

³ «Ճակատամարտ» օրաթերթը լոյս է տեսել Կ. Պոլսում 1918–1924 թթ.: Խմբագիրը Հակոբ Միրունին էր: Պատասխանատու տնօրեններն էին Մանուկ Ասլանյանը և Շավարշ Միսաքյանը: Արտոնատերը Վրթանես Մարտիրոսյանն էր: Թերթն ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ» (1918, - 1–12), «Արիամարտ» (1918, - 13–32) և «Ճակատամարտ» (1918, - 33-ից մինչև վերջին համարը):

⁴ Յ. Միրունի. նշվ. աշխ., էջ 205:

ու հողակտորին: Այսպես, թերթը տեղեկացնում էր, որ մինչև 1915 թ. կոտորածները Կեյ-վեի Էջմե գյուղը 180 տուն հայություն ուներ, որոնցից 15–20 տուն էին կազմում Եղեռնից հետո ծննդավայր վերադարձողները: Նրանք հայտնվել էին անպատասպար և անօգնական վիճակում, քանզի նրանց տները բռնագավթել էին թուրք կամ իսլամ գաղթականները, ովքեր չէին ուզում դուրս գալ և հանձնել դրանց բուն տերերին⁵: Նմանօրինակ իրավիճակ էր Մալկարա գյուղում: Թղթակիցը գրում էր, որ տեղական մարմինների ներկայացուցիչները «...չէին ուզեր յանձնել վերադարձողներուն գոյքերը»⁶: Պարտիզակի թղթակիցը տեղեկացնում էր, որ քաղաքի թուրքական որբանոցն ավագականոցի էր վերածվել⁷: 1915–1918 թթ. այդ որբանոցի թուրք սասները հայերի լքված տներից գողացել ու վաճառել էին դրանցում եղած պիտանի և արժեքավոր իրերը: Երբ 1918 թ. Պարտիզակ վերադարձած, գաղթականի վերածված հայերն այդ գողոնի մեջ ճանաչում էին իրենց պատկանած իրեր և պահանջում էին վերադարձնել, միննույն է, այդ արդարացի պահանջն ու բողոքի ձայնն անլսելի էին մնում: Նրանց անգամ չէին թողնում քաղաքի եկեղեցում հայերի կողմից ի պահ թողնված ու դեռևս չգողացված իրերից վերցնել օգտագործման համար⁸:

Հայերին տեղահանելուց հետո թուրքական կառավարությունը նրանց տներում անմիջապես սկսել էր տեղավորել Բալկանյան պատերազմից հետո Թուրքիա եկած իսլամ դավանող գաղթականներին և Առաջին աշխարհամարտի ժամանակ հակառակորդի գրաված տարածքների իսլամ ազգաբնակչությանը⁹: Միննույն ժամանակ իրենց բնակավայրերը վերադարձող հայ գաղթականներին թուրքական իշխանությունները ոչ միայն չէին տալիս նրանց ունեցվածքը, այլև չէին տրամադրում պետական նպաստ և գոնե առաջիկա ձևերով համար վառելիք, իսկ զարնանացանի համար՝ սերմացու¹⁰:

«Ճակատամարտի» հրապարակումների համաձայն՝ Յեղասպանությունը վերապրած 3000 հայ գաղթականներ «թշվառութեան էին մատնուած» Խարբերդում և շրջակա գյուղերում¹¹: Եթե նրանցից յուրաքանչյուրին օրական տրամադրվեր մեկ կամ մեկուկես հաց, սպա, ըստ խմբագրության հաշվարկների, ամսվա կտրվածքով անհրաժեշտ կլիներ ծախսել 10.000 ոսկեդրամ¹²: Թերթում նշվում էր նաև, որ 1916 թ. Խարբերդում ու շրջակա գյուղերում ապաստանած հայ գաղթականների թիվն իրականում ավելի շատ

⁵ «Ճակատամարտ», 2. XII. 1918 (տե՛ս «Կեյվեի հայերը» հոդվածը):

⁶ Նույն տեղում, 22. XII. 1918 («Գավառի ձայներ»):

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում («Միշտ հուսախաբ»):

¹¹ Նույն տեղում, 19. XII. 1918 («Վերապրողները»):

¹² Նույն տեղում:

էր՝ 5000³: Նրանց օգնում էին այդ շրջանում գործող ամերիկյան միսիոներները: Խարբերդում գտնվող գաղթականների թիվը գնալով պակասում էր, որովհետև նրանց մի մասը վերադառնում էր իրենց բնակավայրերը, իսկ մի մասն էլ, անսնունդ և անխնամ մնալով, մահանում էր: Խարբերդի հայ գաղթականներից 2000-ը որբեր էին՝ «բոլորն ալ շատ աննպաստ պայմաններու տակ»⁴:

Թերթի «Գավառի ձայներ» բաժնում գետեղված տեղեկատվության համաձայն՝ Եալովայի շրջանի Մերտեկեոզ գյուղ վերադարձած ավելի քան 83 տուն կազմող 180 հայ գաղթականները տեղի հայերին պատկանած 269 տներից 121-ն էին կիսականգուն գտել⁵: Ընդ որում, հայերի 94 տների հետքն անգամ չէր մնացել, իսկ 54-ը բացարձակապես պիտանի չէին բնակության համար: «Նոր 300 հոգի գալուն կը սպասուի: Աստնցմով դեռ մէկ երրորդն ալ դարձած չըլլար»⁶, – գրում էր «Ճակատամարտի» թղթակիցը: Նաև ասում էր, որ Եալովայի Եալաք-Տերե գյուղ էին հասել 74 գաղթական կամ 39 ընտանիք հայեր: Տեղի 239 հայկական տներից 146-ն էին դեռևս բնակելի համարվում, 37-ը կիսակործան էին, 56-ը՝ հիմնահատակ քանդված⁷:

«Ճակատամարտի» հրապարակումները փաստում էին, որ Մուղրոսի զինադադարից հետո թուրքական «...կառավարութիւնը հրահանգ տուաւ տարագրեալ Հայերը իրենց բնակավայրերը վերադառնալու»⁸: Բացի այդ՝ երկրի ղեկավարությունը «...կ'արտօնէր, որ ամեն մարդ իր հայրենիքը երթայ, ճամբորդութեան ծախքերը և ապահովութիւնը երաշխաւորելով»⁹: Թերթում, սակայն, սպագրված այս և բազմաթիվ այլ հոդվածներն ու ռեպորտաժները հակառակն էին վկայում: «Ճակատամարտը» գրում էր, որ զինադադարից հետո վարչական կարգադրությամբ պետք է վերջ տրվեր հայերի հալածանքին, իսլամացված հայերը պետք է դառնային իրենց դավանած նախկին կրոնին, իսկ որբերն ու բռնի առևանգված աղջիկները և կանայք՝ վերադարձվեին հայ համայնքին¹⁰: Գաղթական դարձած հայերը պետք է վերադառնային իրենց բնակավայրերը՝ վերատիրանալով իրենցից իլված «...կալուածներուն և յափշտակուած ինչքերին»¹¹: Հայկական գավառներից հասնող լուրերը փաստում էին, որ «...այդ բոլորը խօսքի սահմանէն անդին չանցան, ամեն բան կը մնայ Թալէաթի կարգադրութեան համաձայն»¹²:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, 26. XII. 1918 («Գավառի ձայներ»):

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, 14. XII. 1918 («Իթթիհատական նոր դավ մը»):

¹⁹ Նույն տեղում, 19. XII. 1918 («3000 հայեր թշուառութեան մատնուած»):

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

«Ճակատամարտը» պնդում էր, որ բռնի թրքացված հայ կանայք չէին կարողանում վերստին դավանել քրիստոնեություն և, ըստ այդմ, նրանք չէին կարող հայ մարդու ժառանգորդը լինել, քանի որ արդեն համարվում էին թրքուհիներ²³: «Կալուածներու խնդիրը գրեթէ անլուծելի է, որովհետեւ ամենաբարձր պաշտօնեաներէն մինչեւ ամենախոնարհը, միևնոյն յանկերգը ունին իրենց բերնին մէջ՝ Մարկոսին, Յարութիւնին, Յովհաննէսին կալուածները Շաքէին և Լութիֆիէին չիյնար»²⁴, – կարդում ենք «Ճակատամարտում»: Ըստ թերթի հրապարակումների՝ զինադադարից հետո թուրքական կառավարությունը թէև չեղյալ էր հայտարարել հայերի վերաբերյալ իթթիհատական կառավարության ընդունած բացառիկ օրենքները և կարգադրել էր գաղթական կամ տարագիր հայերի բոլոր կալվածքները վերադարձնել դրանց նախկին տերերին, բայց Ներքին գործերի նախարարությունը սրբազրույթներ էր կատարել այդ կարգադրության տեքստում²⁵: Դրանց համաձայն՝ «...տարագրեալներէն անոնք, որ կը վերադառնան և անձնապէս իրենց կալուածները կը պահանջեն, անմիջապէս պիտի ստանան, իսկ անոնք, որ անձնապէս չեն ներկայանար (մեռած, կորսուած, կոտորուած), անոնց մօտաւոր կամ հեռաւոր ժառանգորդներուն չպիտի յանձնուին կալուածները»²⁶: Այստեղից կարելի է հետևություն անել, որ հայերի անտեր մնացած կալվածքները կա՛մ պետք է մնային դրանք բռնագրաված թուրքերի ձեռքերում, կա՛մ՝ դառնային «...արքունական կալուած»²⁷: Այնինչ, պարբերականի կարծիքով, թուրքական կառավարությունն իրավական ու բարոյական ոչ մի հիմք չունէր այդպէս վարվելու համար: «Հայերու կալուածները անտեր չէին մնար, եթէ Հայերը իրենց կամքէն անկախ, բնաջնջումի դատապարտուած չըլլային: Զոհերը իրենք մեղաւոր չէին: Ուրեմն և կառավարութիւնը իրաւունք չունի այդպիսիներու կալուածները յափշտակելու: Այդ կալուածները պէտք է յանձնել ուղղակի տերերուն, իսկ անոնց չգոյութեան պարագային, անոնց ազգականներուն: Իսկ այն կալուածները, որոնց ժառանգորդներուն ազգականութիւնը օրէնքի նախատեսած սահմաններէն հեռու են, պէտք է վերադարձուին պատկանեալ համայնքներուն»²⁸, – ահա սա էր թերթի դիրքորոշումն այս խնդրում:

«Ճակատամարտը» գրում էր, որ արևմտահայերը սխալվել էին՝ կարծելով, թէ Մուդրոսի զինադադարից հետո իրենց համար ստեղծվելու էր բնականոն և տանելի կացություն²⁹: Իրականում թուրքական տիրապետության տակ գտնվող հայությունը կրկին օրենքից դուրս էր գտնվում, ճիշտ այնպէս, ինչպէս զինադադարին նախօրոյդ

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, 25. II. 1919 («Տարագիրներու կալվածները»):

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, 5. III. 1919 («Վաղվան համար»):

տարիներին: Հայ ժողովուրդն իր հայրենիքում թափառական էր և անպաշտպան, զուրկ էր տուն ու տեղից, ընտանիքից, ունեցվածքից, նաև ենթակա էր ջարդի սպառնալիքին³⁰: 1919 թ. օգոստոսին «Ճակատամարտը» տեղեկացնում էր թուրքական կառավարության այն որոշման մասին, որով գավառային իշխանություններին հրահանգ էր տրվել տասանորդի տուրք գանձել բոլոր հայկական գյուղերից, որոնցում դեռևս նոր-նոր էին պատսպարվել գաղթից վերադարձող հայ տարագիրները³¹: Եվ դա այն դեպքում, երբ արևմտահայ գավառներում հայերի դատարկ մնացած տներում կառավարության հրամանով տեղավորված իսլամ դավանող և թուրք գաղթականներին ոչ միայն ազատում էին տասանորդի տուրքից, այլև մնացած նահանգների ազգաբնակչության կողմից մուծված տասանորդի տուրքից հավաքված հացահատիկն ուղարկում էին նրանց՝ որպես օգնություն³²: «Այս պատկերին առջև մարդ կը մնայ ապշած. մի թէ աշխարհի վրայ կը գտնուի կառավարութիւն մը, որ ըլլայ այնքան անողորմ, որ մտքէն անցնէ տասանորդի տուրք գանձել այնպիսի ժողովուրդէ մը, որ վերջին 5–6 տարիներու ընթացքին յայտարարուած էր օրէնքէ դուրս, անոր մեծ մասը մարդ գազաններու և վայրենի գազաններու կեր դարձած է, թափառած է պետութեան զանազան մասերը, առանց գործի, առանց բնակարանի, կորսնցուցած ամեն բան, մերկ վերադարձած է իր աւերուած օճախը»³³, – այսպես էր արտահայտվում թերթը: Պահանջում էր թուրքական իշխանություններից վերջ տալ հակամարդկային քաղաքականությանը և պետական միջոցներով հոգ տանել հայ գաղթականների ու որբերի խնդիրներին այնքան ժամանակ, մինչև նրանք ոտքի կկանգնեն ու կվերակազմավորվեն³⁴: Որպես հիմք թերթը նշում էր Թուրքիայի այն օրենքը, ըստ որի՝ գաղթականությունը մինչև 7 տարի տուրքերից ազատված էր³⁵:

«Ճակատամարտն» անդրադարձել է նաև հայ գաղթականների վերադարձի ու հայ որբերի հիմնահարցերի լուծման համար պետության հովանու ներքո ստեղծվելիք «Խառոր հանձնաժողովի» աշխատանքներին³⁶: Այդ հանձնաժողովում նշանակվելու էին հայ և թուրք անդամներ Բ. Դռան կողմից, ինչին համաձայն չէր թերթը. հայ անդամները պետք է ընտրվեին հայ ներկայացուցիչների կողմից և իրենց հրահանգներն էլ ստանային նույն աղբյուրից³⁷: Պարբերականը ձախողված և կորստաբեր էր համարում հայ գաղթականների՝ անձրագիր ու հախուռն վերադարձի որոշումը, ինչի հետևանքով ավելորդ զոհեր էին գրանցվում ամեն օր: Նաև տեղեկացնում էր, որ պետությունն արդեն ցանկանում էր

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում, 13. VIII. 1919 («Վերադարձող տարագիրները և տասանորդի տուրքը»):

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, 10. XII. 1918 («Որոշումը չի բավեր»):

³⁷ Նույն տեղում:

վերադարձած հայ գաղթականներին այլևս չտեղափոխել նախկին բնակավայրերը, այլ պահել այն վայրերում, որտեղ նրանք հայտնվել էին աքսորվելու կամ տարագրվելու պատճառով: Հենց այդ վայրերում «...պետք է լուծում ստանային» նրանց կարիքները³⁸: Հայ-թուրքական պետական և Անտանտի ներկայացուցիչ հանձնաժողովների կողմից հայ գաղթականների վիճակի ուսումնասիրության նպատակով կազմվելիք մարմինը պետք է լիներ հայ տարագրյալների բնակավայրերում ու աքսորավայրերում՝ տեղում նրանց խնդիրներին ծանոթանալու և դրանց համար լուծումներ առաջարկելու նպատակով³⁹: Թերթը թերահավատորեն էր մոտենում այդ հանձնաժողովների աշխատանքների արդյունավետությանը: Գտնում էր, որ Կ.Պոլսում և Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող հայկական կայացած գաղթօջախներում գործող ազգային կառույցները պետք է զբաղվեին հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրներով՝ համատեղ մշակված ծրագրերով ու ռազմավարությամբ⁴⁰:

«Ճակատամարտի» թղթակից Սուրեն Պալթանյանը հիշատակում էր դեպի Հալեպ տարագրված հայերի մեկ երրորդին, ովքեր ուղարկվել էին Մուսուլի ճանապարհի վրա գտնվող Բես-Յուլ-Այն (Բես-Իլ-Այն) գյուղ⁴¹: Հայ գաղթականների վրանները թուրքերով և չեչեններով բնակեցված այդ գյուղից կես ժամվա հեռավորությամբ էին տեղադրված: Գյուղապետը հայ գաղթականներին կեղծ խոստում էր տվել՝ նրանց չքշել անապատ ու բնակեցնել գյուղում, եթե նրանք իրենց ուժերով և մտները եղած գումարով կառուցեին 3 մեծ շինություն, որոնք պետք է ծառայեին որպես զորանոց թուրք զինվորների համար: Երբ հայ գաղթականներն ավարտում են այդ շինությունների կառուցումը, գյուղապետը դրժում է խոստումը և նրանց վաճառում է ոչխարների հոտի պես⁴²: Մեկ «հոտը» բաղկացած էր 800–1000 հայ գաղթական ու որբ պարունակող վրանից և վաճառվում էր 900 – 1200 կարմիր ոսկով⁴³: Գնված հայ գաղթականներին և որբերին մեկ ժամ ճանապարհով քշելուց հետո բոլորին մերկացնում էին և այրում խարույկի մեջ, իսկ այնուհետև նրանց դիակներն էին բզկտում՝ ոսկուց պատրաստված ատամներ գտնելու հույսով⁴⁴: Բես-Յուլ-Այնում եղած հայ գաղթական գեղեցիկ աղջիկներին կամ վաճառում էին արաբներին «...1 կամ 2 օխա պանիրի փոխարեն», կամ թալանում ու սպանում էին⁴⁵: Մինչև 1918 թ. նոյեմբեր ամիսը 5 — 10 տարեկան բազմաթիվ հայ որբերի օրական 1 հացի դիմաց մերկանդամ քարեր էին հավաքել տալիս Բես-Յուլ-Այնի շրջակայքում կառուցվող երկաթու-

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Նույն տեղում, 7. XII. 1918 («Բես-Յուլ-Այնի կոտորածը»):

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում:

դու ճանապարհի համար⁴⁶: Մուղրոսի զինադադարից հետո Ս. Պալթանյանի կողմից այդ որբերից ընտրվել են 20 հոգի (աղանացի և կեսարացի), տարվել Ադանա ու հանձնվել իրենց ազգականների խնամքին⁴⁷:

Ցեղասպանությունից փրկված ու «...յանուն Հայրենիքի և Ազատութեան զոհուող մաս մը Սասունցիներ՝ 3560 անձ» հայտնվել էին Հյուսիսային Կովկասի Արմավիրի շրջանում⁴⁸: Նրանք 1919 թ. հոկտեմբերի 25-ին նամակ էին ուղարկել արևմտահայոց պատրիարք Զավեն Եղիայանին⁴⁹: Այդ նամակից պարզվում էր, որ սասունցիները գրկված էին պետական ամեն կարգի աջակցությունից: Նրանք խնդրում էին շուտափույթ օգնել իրենց: Չէ որ, հակառակ դեպքում, կմատնվեին սովամահության կամ ցրտահարության, քանի որ բնակարան չունենալու պատճառով բացօթյա կացարաններում էին պատուպարված⁵⁰: 1919 թ. հոկտեմբերին Հայ ազգային միության կողմից ազգային կենտրոնական իշխանություններին մեկ այլ նամակում տեղեկացվում էր, որ Կիլիկիայի շրջանում ապաստան փնտրող Այնթապից ու Արևմտահայաստանի գավառներից եկած հայ գաղթականների թիվը հասնում էր 20.000-ի⁵¹: «Այսքան պատկառելի թուով թշուառ ու կարօտ հայութիւն մը ամեն օր ամեն տեսակ դիմումներ կը կատարէ Միութեանս մօտ, և որոնք մեծ մասով կը մնան անպատասխան՝ դրամի չգոյութեան պատճառաւ»⁵², – կարդում ենք նամակում: Նամակագիրը նաև հայտնում էր, որ Այնթապում ապաստանած հայ գաղթականությունը մինչ նամակը գրելու օրը ոչ Ազգային կենտրոնական իշխանություններից, ոչ ազգային բարեգործական մարմիններից և ոչ էլ մի ուրիշ մարմնից որևէ նպաստ չէր ստացել⁵³: Իսկ Կիլիկիայի շրջանից մեկ այլ՝ Անտիոքի և Սուևտիի (Սուևտի) Հայ ազգային միությունից ստացված գրությունն անհապաղ օգնություն էր պահատում, քանզի տեղի հայ գաղթականներն ու որբերը «...անօթութենէ վերջ, հիմա կը տառապին մալարեայի ու թիֆօյի պէս վտանգաւոր և փոխանցիկ հիւանդութիւններէ, և մահերու թիւր օրէ օր կ'աւելնայ»⁵⁴:

Հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրների մասին հոգացող ազգային Ընդհանուր մարմինը, թերթի կարծիքով, կարիք ուներ ոչ միայն համազգային կարող ուժերի համախմբմանն ու համագործակցությանը, այլև՝ Հայաստանի առաջին հանրապետության աջակցությանը⁵⁵: Անհրաժեշտ էր գործել մի քանի ուղղությամբ: Նախ՝ համազգային

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում, 9. XI. 1919 («Սասունցիներու վիճակը Հյուս. Կովկասի մեջ»):

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում, 19. XI. 1919 («Կացությունը Կիլիկիո շրջանին մեջ»):

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Նույն տեղում:

տուրքի հավաքման և դրա շնորհիվ հայ գաղթականների ու որբերի հիմնախնդիրների լուծման մասին էր խոսքը⁵⁶: Ապա՝ պոլսարնակ մի խումբ փաստաբանների ու իրավագետների կողմից նախաձեռնած հայ գաղթականների ապահովագրական գումարների և ընդհանրապես ցեղասպանված հայերից բռնագավթված հոգևոր ու նյութական ունեցվածքի վերադարձի և փոխհատուցման ուղղությամբ տարվող աշխատանքների կարևորումն էր թերթի կողմից⁵⁷: «Ճակատամարտն» ընթերցողների ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքին, որ թուրքական իշխանությունները, զինադադարով պայմանավորված, իբր թե, պարտադրված էին զբաղվում հայ տարագրյալների վերադարձի և կյանքի ապահովման հիմնահարցերով⁵⁸: Իրականում նրանք ամեն ինչ անում էին, որ այդ խնդիրները չլուծվեին, որ Ցեղասպանությունից հրաշքով ողջ մնացած ու գաղթական դարձած հայերը կրկին անհրավագուրկ մնային և, չկարողանալով հոգավ իրենց ապրուստի ու կեցության վայրի հետ կապված խնդիրները, մատնվեին սովամահության, ինչպես նաև հիվանդանային ու մահանային կամ էլ բռնի թրքացվեին և իսլամացվեին:

«Ճակատամարտի» կարծիքով անհրաժեշտ էր իրավական ճանապարհով փորձել հայ համայնքին վերադարձնել ցեղասպանված հայերի կյանքի և գույքի ապահովագրական գումարները, ինչը «...հարիւր հազարաւոր ոսկիներու կրնայ հասնիլ»⁵⁹: Թերթը գրում էր, թե բազմաթիվ հայ ընտանիքներ ամբողջությամբ կոտորված են և ժառանգորդ չունեն, շատերն էլ որպես ժառանգորդ թողել են մի փոքրիկ որբուկ⁶⁰: Ըստ պարբերականի՝ «...ազգը առաջիններուն ուղղակի ժառանգորդը, իսկ երկրորդներուն փոխանորդը պէտք է դառնայ»⁶¹: Հողվածագիր Վահան Հարությունյանը գիտակցում էր, թե որքան կնճռոտ ու բարդ էր այս խնդիրը, բայց առաջարկում էր հայ իրավագետների նորակազմ միությանը⁶² լրջորեն զբաղվել արևմտահայերի ապահովագրական գումարների վերադարձի հիմնախնդրով, քանզի այդ գումարները նպաստելու էին հայ որբերի ապագան կառուցելու գործընթացին⁶³: Անխնամ, բոկոտն ու թուրքերի կողմից հալածվող հայ որբերը, թերթի համոզմամբ, հաղթահարելու էին իրենց տանջող ցավը և դառնալու էին ինքնավստահ՝ հոգիների խորքերում կրելով կյանքից ստացած դասերն ու սեփական ժողովրդի հարատևության գաղտնիքը⁶⁴: «Որքը մարմնացումը պիտի ըլլայ Հայ լաւագոյն

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ Նույն տեղում, 12. XII. 1918 («Մեր բոլոր իրավունքները անխտիր պաշտպանենք»):

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում, 14. XII. 1918 («Մեր խոսքը»):

⁶³ Նույն տեղում, 12. XII. 1918 («Մեր բոլոր իրավունքները անխտիր պաշտպանենք»):

⁶⁴ Նույն տեղում, 30. XI. 1918 («Որբերուն իրավունքը»):

յատկություններուն: Գուրգուրանք ձեզ, հայ որբուկներ, մեր ապագայ Յոյսեր, վաղուան Արևներ»⁶⁵, – գրում էր թղթակից Հմայակ Մաթնոսյանը:

Հայ որբերին գտնելու և հավաքելու գործը բավականին բարդ էր: Թուրքերի մոտ փակի տակ պահվող հայ փոքրիկներին կարելի էր կորցրած համարել, որովհետև նրանց հիշողությունը պահպանած չէր լինի ազգային և ընտանեկան սովորությունները, մայրենի լեզուն⁶⁶: Անհրաժեշտ էր մտածված գործել՝ արդյունքի հասնելու համար, այլապես թուրքերի կողմից կալանավորված հայուհիների և հայորդիների շունչն անգամ չէր հասնելու նրանց փնտրող ազգակիցներին⁶⁷: Հայ որբերին փնտրելու, ցուցակագրելու, նրանց գտնվելու ճշգրիտ հասցեները նշելու գործով, ըստ թերթի, պետք է զբաղվեր հայ համայնքի կողմից այդ նպատակով ստեղծվելիք մեկ ընդհանուր մարմին, և ոչ թե արվեր հախուռն ձևով ու ցաքուցրիվ ուժերով⁶⁸: Իր հերթին «Որբախնամ» կազմակերպության՝ Կ.Պոլսում գործող Կենտրոնական մարմինը «Ճակատամարտի» միջոցով ընթերցողներին տեղեկացնում և հիշեցնում էր, որ կառույցը զբաղվում էր միայն մինչև 14 տարեկան հայ որբերի հոգաձությանն առնչվող խնդիրներով⁶⁹: Բարեգործական այդ կառույցը խնդրանք էր ներկայացնում, որ Արևմտահայաստանի գավառներից գտնված 14 տարեկանից բարձր տարիքով որբերին չբերեին Կ. Պոլսի «Որբախնամի» կենտրոնատեղի, քանզի «...Որբախնամը», զեթ առ այժմ, ոչ նիւթական միջոցները ունի, ոչ իսկ ժամանակ ունեցած է այսպիսիներու դաստիարակութեան և պատասպարման գործով զբաղելու, հազիւ հասնելով բոլորովին աննեցուկ ու անտէր մնացած որբ մանուկներու սնուցման ու պատասպարման նախնական պէտքերը հայթայթելու»⁷⁰:

«Ճակատամարտի» աշխատակիցներից Մամվել Ռշտունին հայ որբերի և ընդհանրապես հայ գաղթականության խնդիրները լուծելու համար համախմբման էր կոչում ազգային կառույցներին ու ողջ հայ ժողովրդին⁷¹: Նա առաջարկում էր հայ գործարարներին կամ գործատուներին իրենց շահույթից ամսական կտրվածքով «Որբախնամի» և «Տարագրելոցի» մարմիններին կոնկրետ գումար հատկացնել⁷²: Ընտանիքներին, գիշերօթիկ դպրոցներին ու հասարակական հաստատություններին դիմում էր խնդրանքով, որ նրանք ամսվա մեկ կիրակի օրվա ճաշի պատրաստման համար նախատեսած գումարը փոխանցեին «Որբախնամին» և «Տարագրելոցին»⁷³:

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Նույն տեղում, 10. XII. 1918 («Շողերը փրկելու համար»):

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ Նույն տեղում, 26. XII. 1918 («Գավառեն հասած որբերը»):

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Նույն տեղում, 2. XII. 1918 («Խոսքը առանց գործի մեռյալ է»):

⁷² Նույն տեղում:

⁷³ Նույն տեղում:

«Ճակատամարտի» էջերում «Տարագրելոցի» Կենտրոնական հանձնաժողովը «ստիպողական» կոչով դիմում էր թաղական խորհուրդներին, հայկական թերթերի վարչություններին, հայկական թաղերում կազմված և հանուն տարագրյալների հանգանակություն կատարած բոլոր մարմիններին, որ իրենց ձեռքերում գտնվող այդ գումարները շուտափույթ հանձնեին Օսմանյան բանկի Ղալաթիայի կենտրոնի և «Տարագրելոցի» Կենտրոնական հանձնաժողովի հաշվեհամարներին⁷⁴:

Թղթակից Արամ Մաֆրաստյանը Ցեղասպանությունը վերապրած հայ գաղթականների ու որբերի խնդիրները լուծելու արդյունավետ գործիք էր համարում Ազգային գերագույն մարմնի կամ Ազգային խորհրդի ստեղծումը⁷⁵: Դրա մեջ պիտի մտնեին արևմտահայոց բոլոր կազմակերպությունների, միությունների, դասերի և խավերի ներկայացուցիչները⁷⁶: «Ճակատամարտը» փորձում էր հուշել այն ճանապարհները, որոնք կնպաստեին Ազգային գերագույն մարմնի և ազգային խնամատարության գործի կազմակերպմանը: Օրինակ էր բերում բուլղարահայերի ազգային մարմնի գործունեությունը⁷⁷: Այդ կառույցի մեջ ընդգրկված էին բուլղարահայ գաղութի կարող ուժերը: 20.000 հոգանոց բուլղարահայ համայնքը ներդաշնակ գործունեության շնորհիվ կարողացել էր արևմտահայ գաղթականների ու որբերի համար հավաքել և ուղարկել 1,5 միլիոն լև ու նույն արժողությամբ 2 վագոն նոր հագուստեղեն⁷⁸: Ազգային խորհուրդ կամ միություն ստեղծելու պոլսահայերի ջանքերը, սակայն, մնում էին անպտուղ:

Հողվածագիր Մ. Պետրոսյանը ներկայացնում էր, թե ինչպես էին զինադադարից հետո Կ.Պոլսում հայերը կազմել խորհրդակցական ժողով, որը բաղկացած էր հայ քաղաքական կուսակցությունների, միությունների և մամուլի ներկայացուցիչներից⁷⁹: Քվեարկությամբ ընտրված 40 անդամից բաղկացած ժողովն ինքն իրեն պետք է հռչակեր Ազգային խորհուրդ, որի մեջ չպետք է ընդգրկվեին լուսավորչական, կաթոլիկ և բողոքական հայ համայնքների երեսփոխանական ժողովների ներկայացուցիչները⁸⁰: Ազգային խորհրդից ընտրված «Վարիչ մարմինը» պիտի ղեկավարեր ընդհանուր բնույթ կրող ազգային գործերը՝ պատրիարքարաններին թողնելով զուտ քույր եկեղեցիներին առնչվող գործերը: Այս ծրագիրն այդպես էլ կյանքի չկոչվեց հայ ավանդապաշտ ուժերի լարած ինտրիգների պատճառով⁸¹: Մ. Պետրոսյանը կարևորում էր Ազգային միության մարմնի

⁷⁴ Նույն տեղում, 26. XII. 1918 («Ստիպողական կոչ»):

⁷⁵ Նույն տեղում, 1. I. 1919 («Ազգային խորհուրդ»):

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Նույն տեղում, 20. VIII. 1919 («Ինչպե՞ս կազմակերպել Պոլսո ազգային միությունը»):

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ Նույն տեղում:

հիմնման և դրա կողմից ազգային խնամատարության ու ներգաղթի կազմակերպման անհրաժեշտությունը⁸²:

«Ինչպե՞ս կազմակերպել ազգային խնամատարությունը» հողվածում պարզորոշ արտահայտված է «Ճակատամարտի» դիրքորոշումը⁸³: «Ազգային խնամատարությունը, մեջն ըլլալով որբանոցներու գործը, տարագիրներուն և անոքներուն օգնութիւնը, ներգաղթը, անգործներուն աշխատանքի կազմակերպումը, պէտք է համարել ամենածանր հարցը, որ հազիւ թէ ուրիշ ժամանակ հայ ժողովուրդին ներկայացած ըլլայ»⁸⁴, – կարդում ենք թերթում: Պարբերականի համոզմամբ՝ ազգային խնամատարության գործին ընթացք տալու համար անհրաժեշտ էին նյութական մեծ միջոցներ⁸⁵: Որպէս օրինակ բերում էր Հայաստանի Հանրապետությանը, որն իր խնամքի տակ եղած 15.000 որբի համար ծախսում էր ամսական 2.250.000 ռուբլի (յուրաքանչյուր որբի համար՝ ամսական 150 ռուբլի), տարեկան՝ 27.000.000 ռուբլի⁸⁶: Իսկ եթէ իրենք պահէին Կ. Պոլսից մինչև Կիլիկիա ընկած տարածքում գտնվող 5000 որբ, նաև կերակրէին և օգնէին այդ տարածաշրջանում գտնվող կարիքավոր ու տարագիր դարձածներին, անգործ մնացած 5000 հայի, տեղափոխէին 30.000 գաղթականի ու որբի, ապա 3 ամսվա կտրվածքով կծախսվերավելի քան 1.106.000 ռուբլի⁸⁷:

«Ճակատամարտը» հիշատակում էր այն փաստը, որ Զավեն պատրիարքը, որպէս ազգային իշխանության ղեկավար, «հրապարակ էր իջեցրել» 1.000.000 ռուբլի հանգանակելու առաջարկը⁸⁸: Ազգային այս հանգանակությունը թերթը պայմանավորում էր ազգային խնամատարություն ստեղծելու հրամայական անհրաժեշտությամբ⁸⁹: «Հանգանակութեան գումարը մեր ապագային պահանջներուն հետ բաղդատած, փոքր գումար մըն է, որը պէտք է տրուի: Մեր ժողովուրդի բացարձակ մեծամասնութիւնը կը պահանջէ, որ այդ տուրքը տրուի»⁹⁰, – գրում էր պարբերականը: «Ճակատամարտը» ազգային մեծ հանգանակությունը բացված հոշակվելու օրվանից 2 շաբաթ հետո տեղեկացնում էր, թէ «...շատերը դեռ խուլ կը մնան հարիւր հազարաւոր դժբախտներու անունով իրենց ուղղուած կոչին, շատեր ալ ճգներ են սակարկել պահանջուած գումարները»⁹¹: Որպէսզի այդ համազգային տուրքից խուսափողներ չլինէին, թերթն սկսում է հրապարակել այն հայերի «սև ցանկը», ովքեր խուսափում էին իրենց ազգային այդ պարտակա-

⁸² Նույն տեղում:

⁸³ Նույն տեղում, 17. V. 1919 («Ինչպե՞ս կազմակերպել ազգային խնամատարությունը»):

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ Նույն տեղում:

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ Նույն տեղում:

⁹⁰ Նույն տեղում:

⁹¹ Նույն տեղում, 19. IV. 1919 («Սև ցանկը»):

նությունից⁹²: «Անոնք, որ ետ կը մղեն ազգին կողմէ իրենց կարկառուած ձեռքը՝ կ'արժէ, որ առարկայ դառնան հանրութեան արհամարհանքին»⁹³, – կարդում ենք «Մն ցանկը» խմբագրականում:

1920–1922 թթ. «Ճակատամարտը» ներկայացրել է հայ գաղթականների և որբերի վիճակն ու կենսապայմանները, նրանց հանդեպ թուրքական իշխանությունների վարած քաղաքականությունը, ինչպես նաև՝ ազգային կառույցների կողմից տարագրյալների համար իրականացվող ծրագրերը: Թերթի հրապարակումները վկայում էին, որ Ցեղասպանությունը վերապրած գաղթականներին սպառնում էին կրոնափոխությունը և ուժացումը: Բռնի կրոնափոխված հայ կանանց և որբերին հայկական համայնքին վերադարձնելու ուղղությամբ ջանքեր էին գործադրում պատրիարք Չավեն արքեպիսկոպոս Եղիայանը և Կ. Պոլսի Պատրիարքարանը, նաև՝ Ազգերի լիգան իր Հետաքննող հանձնաժողովով: Այդ գործում իրենց մասնաբաժինն ունեին բարեսիրական և միսիոներական մի շարք կազմակերպություններ: Համատեղ ճիգերի շնորհիվ մի քանի հազար բռնի կրոնափոխված ու թրքացված հայուհիներ և հայ որբեր վերադարձվեցին հայկական համայնքին: Այս ամենով հանդերձ՝ 1921 թ. սկզբին Կ. Պոլսի Պատրիարքարանի պատրաստած զեկույցում նշվում էր, որ թուրքական ու քրդական ընտանիքներում դեռևս գտնվում էին ավելի քան 63.000 հայ որբեր⁹⁴:

1922 թ. «Ճակատամարտը» ռեպորտաժների շարք էր սկսել, որոնք ամփոփված էին «Ինչպե՞ս կապրին մեր որբերը» խորագրի ներքո:

Միլլի և քեմալական շարժումների հետևանքով 1921–1922 թթ. արևմտահայության համար ստեղծված հայաջինջ նոր վտանգները ստիպում են Կ. Պոլսում գործող ազգային մարմիններին և, մասնավորապես, Պատրիարքարանին ուղիներ փնտրել, որ երկրից դուրս հանելու ճանապարհով փրկեին հայ որբերի կյանքը: Իհարկե, ոչ բոլորն էին կողմնակից այս ծրագրին: Հիշյալ խնդիրներն իրենց արձագանքն են գտել «Ճակատամարտի» էջերում: Թերթի խմբագրակազմը համոզված էր, որ, հայրենիքից հեռացվելով օտար երկրներ (Միդիա, Լիբանան, Եգիպտոս, Հունաստան, Գերմանիա, ԱՄՆ և այլուր), հայ որբերն աստիճանաբար ուժանալու էին:

Այսպիսով՝ «Ճակատամարտ» օրաթերթը ոչ միայն պաշտպանել է տարագրյալ հայերի շահերն ու իրավունքները, այլև թողարկումների, ռեպորտաժների ու թղթակցությունների միջոցով պատկերացում է տվել նրանց կյանքի և կենցաղի մասին: Այս ծիրում քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ թերթի առաջարկները, ինչպես նաև Եղեռնից մագապուրծ եղած հայ գաղթականների և որբերի իրավունքները մնացել են մերժված ու

⁹² Նույն տեղում:

⁹³ Նույն տեղում:

⁹⁴ Ռ. Մելքոնյան. Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը, Երևան, 2010, էջ 66:

*նսնահարված թուրքական իշխանությունների կողմից, որոնք արեցին ամենը՝ հայույթ-
յանը սեփական հայրենիքից փտարելու և ունեզրկելու համար:*

ПРОБЛЕМЫ КОНФИСКАЦИИ ИМУЩЕСТВА АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ И АССИМИЛЯЦИИ
СИРОТ НА СТРАНИЦАХ КОНСТАНТИНОПОЛЬСКОЙ ГАЗЕТЫ «ЧАКАТАМАРТ»
(1918–1922 ГГ.)

МАРИАМ ОВСЕПЯН

Резюме

Ежедневная газета «Чакатамарт» выходила в свет в 1918 —1924 гг. в Константинополе. Редактором был Акоб Сируни (Чололян). Ответственными директорами были Манук Аслаян и Шаварш Мисакян. Периодическое издание имело 3 названия: «Ардарамарт» (1918 г., № 1–12), «Ариамарт» (1918 г., № 13–32) и «Чакатамарт» (1918 г., с № 33 до последнего номера). Газета «Чакатамарт» всегда держала в центре внимания проблемы армянских беженцев и сирот, представляла работы по их сбору и уходу за ними в Константинополе. Отдельным циклом освещались проблемы и быт сиротских домов, существовавших в городе в 1918–1922 гг.

THE PROBLEMS OF CONFISCATION OF THE ARMENIAN REFUGEES PROPERTY AND THE
ASSIMILATION OF THE ORPHANS IN THE PAGES OF THE CONSTANTINOPLE NEWSPAPER
“CHAKATAMART” (1918 — 1922)

MARIAM HOVSEPYAN

Summary

Daily newspaper “Chakatamart” was published in Constantinople in 1918–1924. The editor was Hakob Siruni (Chololyan). The responsible directors were Manuk Aslanyan and Shavarsh Misakyan. The periodical had 3 names – “Ardaramart” (1918, № 1–12), “Ariamart” (1918, № 13–32) and “Chakatamart” (from 1918, № 33 till the last number). “Chakatamart” newspaper has always referred to the problems of Armenian refugees and orphans. It implemented works on their gathering and nursing in Constantinople. Under the separate row the newspaper dealt with the problems and everyday life of orphanages in the city in 1918–1922.